



DEPARTMENT of
REHABILITATION

Employment, Independence & Equality



Մպառոդի տեղեկատվական ձեռնարկ

Հիշարժան օրեր

Կարևոր կոնտակտներ

Բովանդակություն

Առաքելությունը.....	1
Ներածություն	3
Նպատակը	4
Ով պետք է դիմի	5
Ուղղորդում դեպի այլ գործակալություններ.....	5
Ինչպես դիմել	7
Գնահատման գործընթացը	9
Ով կարող է դիմել	12
Ծառայությունների ստացում.....	14
Անհատականացված պլան աշխատանքի ընդունման համար	16
Աշխատանքի որոնման ծառայություններ	19
Սպառողի պարտականությունները.....	21
Խորհրդատուի պարտականությունները	24
Գործի փակումը.....	25
Հաճախորդի աջակցման ծրագիր	26
Որոշումների վերանայում	27
Գաղտնիություն	29
Բացահայտում	31
Խտրականություն.....	31
DOR-ի տարածքային գրասենյակները	34

Առաքելությունը

Կալիֆորնիայի Վերականգնման դեպարտամենտը (DOR) համագործակցում է սպառողների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ հաշմանդամ անհատների համար զբաղվածություն, ինքնուրույն կյանք և հավասարություն ապահովող ծառայություններ մատուցելու և նրանց շահերը պաշտպանելու նպատակով:

Մեր հիմնական արժեքները

Արժեքներ, որոնցով մենք իրականացնում ենք մեր բոլոր ծրագրերն ու ծառայությունները:

Որակ

Ձգտել բավարարել շահագրգիռ կողմերի կարիքները՝ անընդհատ կատարելագործման, բանիմացության, ստեղծագործական մոտեցման և թիմային աշխատանքի միջոցով:

Հարգանք

Ուշադիր լինել այլոց՝ ներքին, և՛ արտաքին շահագրգիռ կողմերի բազմազան կարիքների նկատմամբ՝ լինելով քաղաքավարի, կարեկից, պատրաստակամ և արհեստավարժ:

Ազնվություն

Բոլոր նախաձեռնություններում գործել բարոյականորեն, ազնվորեն և արհեստավարժորեն:

Անկեղծություն

Պատրաստ լինել լսելու ուրիշներին և տեղեկություններ կիսելու նրանց հետ: Լինել նոր գաղափարների նկատմամբ ճկուն, անխտրական, վստահող և ընկալող:

Պատասխանատվություն

Տեր կանգնել գործողություններին ու դրանց արդյունքներին և պատասխանատվություն ստանձնել այդ ամենի համար:

Մեր դեկավար սկզբունքները

Սկզբունքներ, որոնցով առաջնորդվում ենք մեր ամենօրյա աշխատանքում:

1. Մասնագիտական վերականգնման գործուն ծառայությունների և այլ ծրագրերի ու ծառայությունների մատուցում արդյունավետ, հոգատար, արհեստավարժ և շուտափույթ կերպով:
2. Բանիմաց, ստեղծագործ և խիստ նպատակամղված աշխատուժի ներգրավում, զարգացում ու պահպանում:
3. Հասարակության վստահության պահպանում՝ լինելով ֆինանսապես պատասխանատու և ապահովելով որակյալ ծրագրեր ու ծառայություններ:
4. Մեր դերի պահպանում՝ որպես հաշմանդամների հանրության մեջ հարգված առաջնորդ, հույսի ներշնչում նրանց մեջ, ում ծառայում ենք:

Ներածություն

Եթե հաշմանդամություն ունեք և մասնագիտական վերականգնման ծառայությունների կարիք եք զգում, հնարավոր է, որ Վերականգնման դեպարտամենտը (DOR) կարողանա օգնել Ձեզ աշխատանք գտնել ու դառնալ ինքնուրույն: Այս գրքույկը Ձեր ուղեցույցն է դեպի DOR-ի ծառայություններ:

Որպես DOR-ի սպառող՝ Դուք և Ձեր խորհրդատուն կվճակեք Ձեր մասնագիտական վերականգնման ծրագիրը, որը ներառում է Ձեր աշխատանքային նպատակն ու այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ծառայությունները: Դուք ամենակարևոր անձն եք այս գործընթացում:

Եթե այս գրքույկում չկարողանաք գտնել Ձեր հարցերի պատասխանները, խնդրում ենք դիմել DOR-ի տեղական գրասենյակին Ձեր տարածքում: DOR-ի տարածքային գրասենյակների հեռախոսահամարներն ու հասցեները նշված են 34-35-րդ էջերում:

Նպատակը

Վերականգնման դեպարտամենտի մասնագիտական վերականգնման և ինքնուրույն կյանքի ծրագրերը, նախագծերն ու միջոցառումները իրագործվում են հետևյալ սկզբունքներին համապատասխան՝ հարգանք անհատի արժանապատվության, անձնական պատասխանատվության, ինքնորոշման և ինքնուրույն կյանքի ու բովանդակալից աշխատանքային գործունեության ձգտման նկատմամբ՝ հիմնվելով հաշմանդամների տեղեկացված ընտրության վրա: (Welf. & Inst. Code Sec. 19000(e)(1))

Տեղեկացված ընտրությունը նշանակում է նախատեսել միջոցառումներ, որոնց միջոցով նախագծերի կողմից սպասարկվող հաշմանդամներն ունեն վերականգնման գործընթացում ակտիվ, լիարժեք գործընկերներ լինելու հնարավորություն՝ կատարելով իմաստալից ու տեղեկացված ընտրություններ հետևյալ կերպ՝

- (ա) պահանջներին համապատասխանությունը և մասնագիտական վերականգնման կարիքները գնահատելու ընթացքում.
- (բ) զբաղվածության արդյունքների, այդ արդյունքներին հասնելու համար հարկավոր ծառայությունների, այդ ծառայությունները մատուցող կազմակերպությունների և այդ ծառայությունների ապահովման համար օգտագործվող մեթոդների ընտրություն կատարելիս: (34 C.F.R. Sec. 361.52, տե՛ս նաև 29 U.S.C. Sec. 722(b)(2)(B))

Ով պետք է դիմի

- ❑ Դուք ունե՞ք հաշմանդամություն:
- ❑ Ուզու՞մ եք աշխատել:
- ❑ Հաշմանդամության պատճառով ունենու՞մ եք աշխատանք ստանալու կամ պահելու դժվարություն:
- ❑ Հավատու՞մ եք, որ մասնագիտական վերականգնման ծառայությունները, ինչպիսիք են՝ աշխատանքի տեղավորումը, վարժանքները կամ այլ աշխատանքի վերապատրաստումը, Ձեզ կօգնեն աշխատանք ստանալ կամ պահել:

Եթե այս բոլոր հարցերին «այո» եք պատասխանել, ապա հնարավոր է, որ իրավունք ունենաք օգտվելու DOR-ի ծառայություններից: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք DOR-ի տեղական գրասենյակին:

Ուղղորդում դեպի այլ գործակալություններ

DOR-ը նաև տեղեկություններ և տեղեկատու ծառայություններ է տրամադրում այն անձանց, ովքեր չեն ցանկանում դիմել ծառայություններ ստանալու համար, բայց հարցում են կատարում կամ տեղեկություն են ուզում ստանալ այլ գործակալության կամ ծրագրի մասին, օրինակ՝

- 1) Schedule "A" Appointment - դաշնային օժանդակության մի ձև է, որը մատչելի է դաշնային աշխատանքների դիմող հաշմանդամ անձանց: Schedule "A"-ի նշանակումները տեղեկանք են պահանջում DOR-ի խորհրդատուից:

2) Limited Examination and Appointment Program (LEAP) - LEAP-ն օգնում է հաշմանդամ անձանց հավաքագրել և վարձել պետական ծառայության մեջ՝ հատուկ պետական աշխատանքի դասակարգումներում: LEAP-ին համապատասխանող անձինք կարող են դիմել LEAP-ի կողմից սահմանված ցանկացած քննության, եթե որակավորման նվազագույն պահանջները բավարարվում են: LEAP-ի պահանջներին համապատասխանությունը և մասնակցությունը պահանջում են հաշմանդամության մասին տեղեկանք DOR-ի խորհրդատուից:

Schedule "A"-ի, LEAP-ի և դեպի այլ գործակալություն կամ ծրագիր ուղղորդման մասին ավելին իմանալու համար խնդրում ենք դիմել DOR-ի տեղական գրասենյակին:

Ինչպես դիմել

Ինչպես հայցել DOR-ի ծառայությունները.

1. Գնացեք DOR-ի տեղական գրասենյակ Ձեր տարածքում և լրացրեք դիմում, կամ՝
2. գանգահարեք DOR-ի տեղական գրասենյակ՝ դիմումի ձև խնդրելու կամ DOR-ի ծառայությունների մասին հարցեր տալու համար, կամ՝
3. դիմեք առցանց www.dor.ca.gov հասցեով կամ համացանցային կայքից տպեք դիմումի ձևն ու լրացված դիմումը փոստով ուղարկեք DOR-ի տեղական գրասենյակին:
4. DOR-ին տրամադրեք հարկավոր տեղեկությունները՝ դիմումի գործընթացը սկսելու համար: Համարվում է, որ ներկայացրել եք դիմումը, երբ Դուք կամ, անհրաժեշտության դեպքում, Ձեր ներկայացուցիչը՝

(1) դիմել կամ խնդրել եք ծառայություններ՝

- ա) լրացնելով ու ստորագրելով մասնագիտական վերականգնման ծառայությունների DR222 դիմումը, կամ՝
- բ) One-Stop Center զբաղվածության ծառայությունում մասնագիտական վերականգնման ծառայություններ պահանջող ընդհանուր ընդունելության դիմումի ձև լրացնելով, կամ՝
- գ) այլապես ծառայություններ պահանջելով DOR-ից, և

(2) DOR-ին տրամադրել եք տեղեկատվություն, որն անհրաժեշտ է պահանջներին համապատասխանությունը և ծառայությունների առաջնահերթությունը որոշելու նպատակով գնահատում սկսելու համար, և

(3) պատրաստ եք անցնելու գնահատման գործընթացը:

Օրենքով պահանջվող ժամկետում պահանջներին համապատասխանությունը որոշելու նպատակով՝ **դիմումի թվականը**

այն թվականն է, երբ վերը նշված բոլոր երեք պահանջները բավարարվել են:

Դիմումը ներկայացնելուց կամ ծառայություններ հայցելուց և DOR-ին հիմնական տեղեկություններ տրամադրելուց հետո Ձեզ հետ հարցազրույց կնշանակվի՝ գնահատման գործընթացը սկսելու համար:

Գնահատման գործընթացը

Գնահատման գործընթացի նպատակն է թույլ տալ, որ Դուք և Ձեր խորհրդատուն քննարկեք

- Ձեր հաշմանդամությունն ու թե ինչպես է այն ազդում Ձեր աշխատունակության վրա.
- DOR-ի ծառայությունների տեսակները, որոնցում գուցե կարիք ունենաք աշխատելու:

Պահանջներին համապատասխանություն - Դուք և Ձեր խորհրդատուն՝

- կստանաք և կուսումնասիրեք բժշկական և այլ տեղեկություններ՝ որոշելու համար, թե ինչպես է հաշմանդամությունն ազդում Ձեր աշխատունակության վրա.
- կորոշեք, թե DOR-ի ծառայություններն ինչպես կարող են Ձեզ օգնել աշխատանք ստանալու կամ պահելու հարցում:

Բավարար տեղեկատվություն ստանալուց հետո Ձեր խորհրդատուն կորոշի Ձեր համապատասխանությունը DOR-ի ծառայությունների պահանջներին:

Ծառայությունների առաջնահերթություն - Դուք և Ձեր խորհրդատուն՝

- կուսումնասիրեք և կքննարկեք Ձեզնից ստացված տեղեկություններն ու այլ աղբյուրներ Ձեր հաշմանդամության մասին.
- համաձայնության կգաք, թե ինչպես է այն սահմանափակում գործելու վեց ընդհանուր բնագավառները, ներառյալ՝ հաղորդակցություն, շարժունություն, միջանձնային հմտություններ, ինքնախնամք, աշխատանքային հանդուրժողություն և հմտություններ, և այս գնահատականի հիման վրա՝
- կորոշեք Ձեր հաշմանդամության առաջնայնության գնահատականը, որը ներկայացնում է աշխատանքին առնչվող սահմանափակումների նշանակալիությունը:

Մասնագիտական վերականգնումը գնահատում է պահանջում - Դուք և Ձեր խորհրդատուն կքննարկեք՝

- Ձեր ունակություններն ու կարողությունները և, անհրաժեշտ չափով,
- համապատասխան գնահատումները՝ ծառայություններն ու աշխատանք ստանալու կամ պահելու համար պահանջվող օգնությունը որոշելու համար:

Դուք և Ձեր խորհրդատուն գործընկերներ կլինեք մասնագիտական վերականգնման ծրագրի ամբողջ ընթացքում տեղեկացված ընտրություններ կատարելիս: Ձեր խնդրանքով՝ DOR-ը Ձեզ հետ կհաղորդակցվի Ձեր հիմնական լեզվով և համապատասխան հաղորդակցության եղանակով, որպեսզի կարողանաք լիովին հասկանալ գործընթացը:

Գործուն մասնակցություն - Ձեր մասնագիտական վերականգնման ծրագիրն ավելի արագ կընթանա, եթե ակտիվորեն ներգրավված լինեք Ձեր մասնագիտական վերականգնման (VR) խմբի աշխատանքներում և հնարավորինս շուտ տրամադրեք պահանջվող տեղեկությունները:

Ինչպիսի՞ն կարող է լինել Ձեր օգնությունը գնահատման գործընթացում:

1. Ձեր առաջին հանդիպմանը բերեք լրիվ տեղեկատվություն, ներառյալ
 - ցանկացած փաստաթուղթ Ձեր հաշմանդամության մասին.
 - վերջին հաշվառումները և նպաստների մասին տեղեկանքները, օրինակ՝ Սոցիալական ապահովագրության վարչությունից, կամ Ձեր «Տոմսը» "Ticket to Work" դաշնային ծրագրից.
 - այն բժիշկների, մասնագետների և կազմակերպությունների անունների, հասցեների և հեռախոսահամարների ցուցակը, որոնց հետ խորհրդակցել եք Ձեր հաշմանդամության մասին.
 - Ձեր հաշմանդամությունը հաստատող ցանկացած փաստաթուղթ, օրինակ՝ Ձեր Անհատական կրթական պլանի պատճենը:
2. Տեղեկացեք մասնագիտական վերականգնման մասին և հասկացեք այդ գործընթացը.
 - կարդացեք ծրագրի մասին տեղեկատվությունը, որը մենք տրամադրել ենք Ձեզ.
 - եթե կարդացած կամ նկարագրված նյութից ինչ-որ բան հասկանալի չէ, խնդրեք, որպեսզի Ձեր VR թիմի որևէ անդամ այն բացատրի:
3. Ներկայացեք ժամադրություններին և եղեք ճշտապահ.
 - զանգահարեք Ձեր խորհրդատուի գրասենյակ, եթե չեք կարող ներկայանալ ժամադրության.
 - տեղեկացրեք Ձեր խորհրդատուին, եթե տեղափոխվում եք կամ փոխում եք Ձեր հեռախոսահամարը:
4. Եղեք հետևողական և ավարտեք ցանկացած գործողության Ձեր մասը, որի վերաբերյալ Դուք և Ձեր խորհրդատուն համաձայնության եք եկել:

Ամեն ինչ Ձեզնի՛ց է կախված:

Ով կարող է դիմել

Եթե DOR-ը լիակատար տեղեկատվություն է ստանում Ձեր հաշմանդամության վերաբերյալ, խորհրդատուն Ձեր դիմումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում Ձեզ գրավոր կձանուցի պահանջներին Ձեր համապատասխանության մասին: Եթե Ձեր հաշմանդամության մասին տեղեկատվությունը թերի է կամ ուշացվում է, Դուք և Ձեր խորհրդատուն կպայմանավորվեք երկարաձգման կոնկրետ ամսաթիվ՝ պահանջներին Ձեր համապատասխանությունը որոշելու համար:

Եթե Դուք նպաստներ եք ստանում Սոցիալական ապահովագրության վարչությունից (Social Security Administration) կամ ունեք վավերական "Ticket to Work", ապա ենթադրվում է, որ Դուք համապատասխանում եք DOR-ի ծառայությունների պահանջներին:

Ticket to Work Hotline

1-866-449-2730 Phone

1-866-359-7705 TTY

Ծառայություններից օգտվելու իրավունք ունենալու համար անհատը պետք է.

- ունենա ֆիզիկական կամ հոգեկան թերություն,
- որն էապես խանգարում է աշխատանքով ապահովվելու իր կարողությանը, և
- պահանջվում են մասնագիտական վերականգնման ծառայություններ՝ դիմորդի ուրույն ուժեղ կողմերին, ռեսուրսներին, առաջնահերթություններին, մտահոգություններին, ունակություններին, կարողություններին, հետաքրքրություններին և տեղեկացված ընտրությանը համապատասխան աշխատանքին պատրաստվելու, այն ապահովելու, պահպանելու կամ վերականգնելու համար. այնուհետև՝

- անհատը կարող է օգտվել ծառայությունների տրամադրումից՝ անխտիր բոլորի համար մատչելի միջավայրում աշխատանք ստանալու իմաստով:

Եթե Ձեր հաշմանդամությունն այնքան ծանր է, որ գուցե հնարավոր չի եղել օգտվել DOR-ի ծառայություններից, ապա Ձեզ կտրվի DOR-ի ծառայություններից օգտվելու Ձեր ունակությունը ցուցադրելու հնարավորություն՝ աշխատելով իրական աշխատանքային միջավայրում (փորձնական աշխատանքային փորձառություն): Անհրաժեշտության դեպքում կարող եք DOR-ի համապատասխան ծառայություններ ստանալ փորձնական աշխատանքային փորձառության ընթացքում:

Ծառայությունների ստացում

Ընտրության կարգը - Երբ DOR-ը բավարար փող չունի DOR-ի ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բոլոր դիմորդներին սպասարկելու համար, օրենքը պահանջում է, որ DOR-ը կիրառի «Ընտրության կարգը» կոչվող գործընթացը՝ առավել նշանակալի հաշմանդամություններ ունեցող անձանց առաջնահերթ սպասարկումն ապահովելու համար:

Պահանջներին համապատասխանությունը որոշելուց բացի, նաև կստանաք հաշմանդամության առաջնայնության գնահատական, որը կոչվում է «Ծառայությունների առաջնահերթության որոշում» և օգտագործվելու է Ընտրության կարգի գործընթացում: Բոլոր դիմորդներին հաշմանդամության առաջնայնության գնահատական տալը և նրանց առաջնայնության խմբերում գրանցելը բոլոր դիմորդներին օրենքով սահմանված հետևյալ կարգով սպասարկելու արդարացի եղանակ է՝

- նախ կսպասարկվեն «առավել նշանակալի աստիճանի հաշմանդամ» խմբի անձինք.
- հետո կսպասարկվեն «նշանակալի աստիճանի հաշմանդամ» խմբի անձինք.
- վերջում կսպասարկվեն «հաշմանդամ» խմբի անձինք:

Հաշմանդամության առաջնայնության յուրաքանչյուր խմբի ներսում սպառողները կսպասարկվեն՝ ըստ նրանց դիմումի թվականի:

Հերթացուցակ - Եթե DOR-ը Ձեր հաշմանդամության առաջնայնության խմբի դիմորդներին սպասարկելու համար բավարար փող չունի, Ռուք՝

- կգրանցվեք հերթացուցակում.
- ամեն տարի կտեղեկացվեք, թե որ խումբն է սպասարկվում.
- կտեղեկացվեք, հենց որ միջոցները մատչելի լինեն, այնուհետև կսպասարկվեք՝ ըստ Ձեր դիմումի թվականի:

Հերթացուցակի ծանուցման գործընթացի մասին տեղեկատվություն կգտնեք մեր կայքում՝ www.dor.ca.gov

Քանի դեռ Դուք հերթացուցակում եք, DOR-ը Ձեզ կտրամադրի տեղեկություններ և ուղղորդումներ դեպի այլ ծառայություններ, որոնք գուցե կարողանան օգնել հասնել Ձեր աշխատանքային նպատակներին, մինչև կստանաք DOR-ի ծառայությունները:

Անհատականացված պլան աշխատանքի ընդունման համար (IPE)

Եթե Դուք՝

- դիմել եք ծառայությունների համար,
- ավարտել եք գնահատման գործընթացը,
- համապատասխանել եք ծառայությունների պահանջներին
- և գրանցվել եք հաշմանդամության առաջնայնության սպասարկվող խմբում,

Դուք և Ձեր խորհրդատուն միասին կմշակեք Ձեր IPE պլանը: IPE-ն Ձեր գրավոր պլանն է, որտեղ թվարկվում են Ձեր աշխատանքային խնդիրն ու DOR-ի ծառայությունները, որոնք ստանալու եք՝ Ձեր զբաղվածության նպատակին հասնելու համար: Դուք և Ձեր խորհրդատուն IPE պլանը մշակելու ընթացքում կքննարկեք Ձեր ուրույն ուժեղ կողմերը, ռեսուրսները, առաջնահերթությունները, մտահոգությունները, ունակությունները, կարողությունները, հետաքրքրությունները և տեղեկացված ընտրությունը:

- Դուք և Ձեր խորհրդատուն համատեղ եք աշխատում IPE պլանը մշակելիս:
- Դուք և Ձեր խորհրդատուն կորոշեք Ձեր աշխատանքային նպատակները:
- Դուք, DOR-ի կանոնակարգերի շրջանակներում, հնարավորություն կունենաք քննարկելու և ընտրելու մասնագիտական վերականգնման կոնկրետ ծառայություններ, մատակարարներ ու աշխատավայրեր, որոնք անհրաժեշտ են Ձեր աշխատանքային նպատակներին հասնելու համար:

- Դուք և Ձեր խորհրդատուն կքննարկեք անհրաժեշտ ծառայությունները ստանալու համար իրականացվող գործընթացը:

IPE պլանի մշակում

Ձեր IPE պլանը ներառելու է հետևյալը՝

- Ձեր աշխատանքային նպատակի նկարագրությունը.
- Ձեր աշխատանքային նպատակին հասնելու ժամանակացույցը.
- Անհրաժեշտ ծառայությունների և ծառայության մատակարարների նկարագրությունը.
- ներառված ծառայություններից յուրաքանչյուրի մատուցման ժամանակացույցները.
- ծառայությունները ստանալու գործընթացի նկարագրությունը.
- Ձեր առաջընթացը չափելու համար անհրաժեշտ չափանիշների նկարագրությունը.
- Ձեր խորհրդատուի, Ձեր և IPE պլանում ընդգրկված այլ անձանց պարտականությունները.
- IPE-ի մի մասի վճարմանը սպառողի մասնակցության ընդհանուր նկարագիրը, եթե կիրառելի է.
- համեմատելի ծառայությունների և օգուտների որոշում, որոնց կարող եք դիմել և ապահով ստանալ:

Ձեր IPE պլանի մշակման տարբերակները ներառում են՝

- աջակցություն Ձեր VR թիմից.
- աջակցություն արտաքին ռեսուրսներից.
- Ձեր սեփական IPE-ի մշակում:

Ձեր VR թիմի անդամը՝

- կբացատրի IPE-ի բաղադրիչներն ու DOR-ի ուղեցույցները.
- կբացատրի՝ արդյոք հարկավոր կլինի վճարել ծառայությունների մի մասի համար (ֆինանսական մասնակցություն).
- կբացատրի այլ աղբյուրներից մատչելի ծառայություններ (համեմատելի ծառայություններ և օգուտներ) և այլ առնչվող տեղեկություններ օգտագործելու անհրաժեշտությունը.
- Ձեզ կօգնի լրացնել DOR-ի ձևաթղթերը.
- կբացատրի Ticket to Work ծրագիրը:

Ձեր խորհրդատուն կուսումնասիրի Ձեր IPE պլանի նախագիծը՝ համոզվելու համար, որ Ձեր նպատակներն ու անհրաժեշտ ծառայությունները համապատասխանում են DOR-ի ուղեցույցներին:

Աշխատանքի որոնման ծառայություններ

DOR-ը կտրամադրի աշխատանք ապահովելու, պահպանելու կամ վերականգնելու գործում Ձեզ օգնելու համար անհրաժեշտ ծառայությունների ընդգրկույթն ու տևողությունը:

Ձեր IPE-ն պետք է լրացված ու ստորագրված լինի Ձեր կողմից և հետո գրավոր հաստատված լինի Ձեր խորհրդատուի և/կամ վերականգնման հարցերով վերահսկչի կողմից, նախքան կկարողանաք ստանալ Ձեր IPE-ում ներառված ծառայությունները:

Ոչ բոլոր մատչելի ծառայություններն են հարկավոր բոլոր սպառողներին: DOR-ի ծառայությունները ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով`

- խորհրդատվություն և առաջնորդում.
- ուղղորդումներ և օժանդակություն ` այլ գործակալություններից ծառայություններ ստանալու համար.
- օժանդակություն աշխատանքի որոնման և տեղավորման հարցերում.
- մասնագիտական և այլ վերապատրաստման ծառայություններ.
- ֆիզիկական և հոգեկան թերությունների գնահատում.
- աշխատավայրում իրականացվող կամ անձնական օժանդակության ծառայություններ.
- թարգմանչական ծառայություններ.
- վերականգնման և կողմնորոշման կամ փոխադրման ծառայություններ խուլ և/կամ կույր անհատների համար.
- մասնագիտական լիցենզիաներ, գործիքներ, սարքավորումներ, նախնական պաշարներ և նյութեր.

- տեխնիկական օգնություն ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեության համար.
- վերականգնողական տեխնիկայի միջոցներ.
- աջակցվող զբաղվածության ծառայություններ.
- ընտանիքին մատուցվող ծառայություններ.
- ըստ անհրաժեշտության՝ փոխադրումներ, ինչպիսիք են ուղևորություններն ու դրանց հետ կապված ծախսերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի Ձեզ հնարավորություն ընձեռեն մասնակցելու մասնագիտական վերականգնման ծառայության աշխատանքներին.
- ծառայություններ աշխատանքային գործունեության ավարտից հետո.
- անցումային ծառայություններ ուսանողների համար.
- զբաղվածության հնարավորությունների ընդլայնում հաշմանդամների համար, որոնք ներառում են մասնագիտական զբաղվածություն և ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն, բայց չեն սահմանափակվում դրանցով:

Որոշեք Ձեր նպատակները

Մպատողի պարտականությունները

IPE պլանի մշակումն ավարտելուց հետո Ձեր պարտականությունն է՝

- կապ պահպանել խորհրդատուի հետ և ներկայանալ ժամադրություններին.
- խոսել Ձեր VR թիմի անդամի հետ, եթե ունեք Ձեր պլանի վրա բացասաբար անդրադարձող խնդիր (օրինակ՝ հասցեի, բժշկական կամ ֆինանսական վիճակի փոփոխություններ).
- քննարկել ցանկացած փոփոխություն, որը գուցե հարկավոր լինի Ձեր պլանում.
- դիմել համեմատելի ծառայությունների և օգուտների համար (օրինակ՝ ֆինանսական օգնություն, դրամաշնորհներ կամ ծառայություններ ոչ-DOR գործակալությունների միջոցով) և ապահով կերպով դրանք ստանալ.
- անհրաժեշտության դեպքում ֆինանսապես մասնակցել Ձեր պլանին.
- հաճախել և լիովին մասնակցել մասնագիտական վերապատրաստման ծրագրերին ու դասընթացներին.
- տրամադրել առաջընթացի կանոնավոր թարմացումներ, գնահատականներ և պահանջի դեպքում ներկա լինել տարեկան ամփոփիչ խորհրդակցություններին.
- լիովին մասնակցել Ձեր աշխատանքի որոնման և տեղավորման միջոցառումներին.
- նախնական հավանություն ձեռք բերել Ձեր խորհրդատուից կամ վերականգնման հարցերով վերահսկչից, նախքան կգնեք Ձեր IPE պլանին առնչվող որևէ ապրանք կամ ծառայություն. պարտադիր կերպով տալ գրավոր համաձայնություն, նախքան որևէ ծառայություն կարող է մատուցվել.

- համաձայնությունն ձեռք բերել Ձեր խորհրդատուի հետ և ստորագրել IPE-ի գրավոր ուղղում, եթե նշանակալի փոփոխություն է կատարվում Ձեր պլանում.
- հաղորդակցվել և փոխգործակցել քաղաքավարությամբ, սիրալիրությամբ և հարգանքով:

Չհամագործակցելը, ողջամտության սահմաններում հնարավոր ջանքեր չգործադրելը կամ շարունակական կապ կամ նշանակված ժամադրությունները չպահպանելը կարող է հանգեցնել հետագա ծառայությունների կորստի կամ Ձեր գործի նյութերի փակման:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՌԱՎԵԼԱՐԿՈՒՄ

IPE պլան մշակելիս սպառողը և DOR-ը կորոշեն զբաղվածության ցանկալի արդյունքը, որը կհամապատասխանի սպառողի ուրույն ուժեղ կողմերին, ռեսուրսներին, առաջնահերթություններին, մտահոգություններին, ունակություններին և կարողություններին:

Նահանգային VR ծառայությունների ծրագիրը բացառապես նախատեսված չէ հաշմանդամ անհատներին նախնական մակարդակի աշխատանքի տեղավորելու համար, այլ նախատեսված է մարդկանց հնարավորություն ընձեռելու համար, որպեսզի նրանք հետամուտ լինեն բովանդակալից աշխատանքային գործունեության՝ ապահովելով իրենց ունակություններին ու կարողություններին համապատասխանող զբաղվածություն: (Welf. and Inst. Code Sec. 19000, subd. (a)(6))

Ապագա նպատակներ

Աշխատանք, անկախություն և հավասարություն

Խորհրդատուի պարտականությունները

Ձեր խորհրդատուի պարտականությունն է՝

- Ձեզ օգնել տեղեկացված ընտրություն կատարելիս.
- տրամադրել խորհրդատվություն և առաջնորդում.
- գաղտնի պահել տեղեկությունները, բացի այն դեպքից, երբ օրենքը խորհրդատուից պահանջում է տեղեկություններ հաղորդել.
- անհրաժեշտության դեպքում Ձեզ տեղեկացնել առկա ռեսուրսների և ուղղորդումների մասին.
- խորհուրդ տալ Ձեր իրավունքների և իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ, ներառյալ DOR-ի որոշումների վերանայումը, ինչպես միջնորդության հայց ներկայացնել, պահանջել անկախ լսումներ կամ խտրականության մասին բողոք ներկայացնել.
- Ձեզ տեղեկացնել Հաճախորդի աջակցման ծրագրի (CAP) մասին.
- օգնել Ձեր պլանի համար ծառայություններ համակարգելու գործում.
- պարբերաբար ուսումնասիրել Ձեր առաջընթացն ու կատարել Տարեկան ուսումնասիրություն՝ ծառայության մատուցումը ժամանակին շարունակելու համար.
- համաձայնություն ձեռք բերել Ձեզ հետ և տրամադրել Ձեր ստորագրության գրավոր ուղղում, եթե նշանակալի փոփոխություններ լինեն Ձեր IPE պլանում.
- Ձեզ լիովին տեղեկացված պահել պլանի իրագործման ամբողջ ընթացքում, ներառյալ լիակատար խորհրդատվություն նախքան Ձեր ծառայությունների հաշվառումը (գործի նյութերը) փակելը.
- հաղորդակցվել և փոխգործակցել քաղաքավարությամբ, սիրալիրությամբ և հարգանքով:

Միասին մենք կարող ենք մեծ արդյունքների հասնել:

Գործի փակումը

Ձեր ծառայությունների հաշվառումը (գործի նյութերը) կարող է փակվել տարբեր պատճառներով:

Լավագույն պատճառն այն է, երբ Դուք հաջողությամբ աշխատում եք 90 օր: Այդ դեպքում Ձեր ծառայությունների հաշվառումը կարող է բարեհաջող փակվել:

Ձեր ծառայությունների հաշվառումը փակելու մյուս պատճառները ներառում են՝

- որոշվել է, որ Դուք չեք համապատասխանում ծառայությունների պայմաններին.
- Դուք հասանելի չեք, որպեսզի անցնեք անհրաժեշտ գնահատման գործընթացը՝ պահանջներին համապատասխանությունը կամ ծառայությունների առաջնահերթությունը որոշելու նպատակով.
- Դուք խզում եք կապը DOR-ի հետ, և հնարավոր չէ որոշել Ձեր տեղը կամ կապ հաստատել Ձեզ հետ.
- Դուք հրաժարվում եք ընդունել և օգտագործել DOR-ի ծառայությունները կամ մասնակցել դրանց.
- Դուք չեք համագործակցում գնահատման գործընթացներում կամ Ձեր IPE պլանում.
- Դուք զբաղվում եք հանցավոր գործունեությամբ, ներառյալ խաբեությունը՝ կապված Ձեր դիմումի կամ մասնագիտական վերականգնման ծառայությունների ստացման հետ:

Դուք կարող եք բողոքարկել DOR-ի ցանկացած գործողություն կամ որոշում, ներառյալ Ձեր ծառայությունների հաշվառումը փակելու գործողությունը:

Հաճախորդի աջակցման ծրագիր

Եթե DOR-ի տրամադրած ծառայությունների հետ կապված խնդիրների եք հանդիպում, կարող եք օգնություն հայցել Հաճախորդի աջակցման ծրագրից (CAP): Խորհուրդ է տրվում նախ փորձել խնդիրը լուծել Ձեր խորհրդատուի և/կամ վերականգնման հարցերով նրա վերահսկչի հետ: CAP-ի փաստաբանը կարող է Ձեզ տրամադրել տեղեկատվություն, խորհրդատվություն և ներկայացուցչություն, ներառյալ օգնություն դատական, վարչական կամ այլ պատշաճ իրավական պաշտպանության միջոցների դիմելիս Ձեր իրավունքների պաշտպանությունն ապահովելու և համապատասխան ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար: Ծառայությունների համար դիմելուց հետո ցանկացած ժամանակ կարող եք աջակցություն ստանալ CAP-ից մինչև այն պահը, երբ կդադարեք ծառայություններ ստանալ: Դուք միշտ իրավունք ունեք բերելու ընտանիքի անդամին, ներկայացուցչին կամ CAP-ի փաստաբանին՝ հանդիպելու DOR-ի անձնակազմի հետ: CAP-ի փաստաբաններն անկախ փաստաբաններ են և DOR-ի աշխատողներ չեն հանդիսանում:

Եթե տեղում չեք կարողանում հասնել Ձեր խնդիրների լուծմանը, CAP-ը կարող է օգնել Ձեզ պահանջել միջնորդության ժողով, նախապատրաստվել այդ ժողովին կամ Ձեզ ներկայացնել այնտեղ, պահանջել որոշման վարչական վերանայում, կամ խորհուրդ տալ արդար լսումների ընթացակարգի վերաբերյալ:

Client Assistance Program
Նահանգային ուղղորդումներ
1-800-952-5544 Phone
1-866-712-1085 TTY
Ձեր տեղական CAP-ի փաստաբան

Որոշումների վերանայում

Որոշման վարչական վերանայում

Երբ Ձեր խնդիրները տեղում չեն լուծվում Ձեր խորհրդատուի կամ վերականգնման հարցերով վերահսկչի կողմից, կարող եք որոշման վարչական վերանայում պահանջել շրջանի վարչական պաշտոնյայից: Դարձյալ, CAP-ը Ձեզ կաջակցի այս պահանջի հարցում:

Միջնորդություն

Միջնորդությունը DOR-ի հետ ունեցած տարաձայնությունները լուծելու մեկ այլ տարբերակ է: Միջնորդությունը կամավոր, գաղտնի և խնդիրների լուծմանն ուղղված գործընթաց է, որին աջակցում են DOR-ի աշխատակից չհանդիսացող որակավորված, անաչառ միջնորդները:

Միջնորդության նպատակներն են՝ լիովին նկարագրել վեճի երկու կողմերը, վերլուծել խնդիրը լուծելու տարբերակներ և հասնել փոխադարձաբար ընդունելի լուծումների:

Այս ծառայությունն անվճար է դիմորդների, իրավասու անհատների և սպառողների համար: Միանգամայն թույլատրելի է աջակցության համար ներկայացուցիչ բերել միջնորդության ընթացքում:

Միջնորդություն պահանջելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել Ձեր խորհրդատուին, վերականգնման հարցերով նրա վերահսկչին կամ շրջանի վարչական պաշտոնյային Ձեր տարածքային գրասենյակում: DOR-ի տարածքային գրասենյակների հեռախոսահամարները նշված են 34-35-րդ էջերում:

Արդար լուծումներ

Եթե Դուք դժգոհ եք մնացել DOR-ի՝ Ձեր դիմումին կամ Ձեզ մատուցված ծառայություններին առնչվող որևէ գործողությունից կամ որոշումից, կարող եք Արդար լուծում պահանջել DOR-ի որոշումից կամ գործողությունից հետո մեկ տարվա ընթացքում: Եթե Դուք դժգոհ եք մնացել որոշման կամ ընտիր վարչական վերանայման արդյունքում կայացված որոշումից, ապա պետք է որոշումը ստանալուց հետո 30 օրվա

ընթացքում արդար լսման պահանջ ներկայացնել Դեպարտամենտին: Լսումը տեղի կունենա Ձեր պահանջի ամսաթվից հաշված 60 օրվա ընթացքում, եթե համաձայն չեք հետաձգման: Կարելի է միաժամանակ հետամուտ լինել որոշման ոչ պաշտոնական վարչական վերանայման: Որոշումը կկայացվի պահանջի ներկայացման թվականից հետո 15 օրվա ընթացքում: Կարող եք լսմանը ներկայանալ անձամբ կամ ներկայացուցչի կամ Ձեր իսկ ընտրած այլ փաստաբանի ուղեկցությամբ: Շատ խնդիրներ կարող են լուծվել տեղում, ոչ պաշտոնապես և ավելի արագ: Ձեզ համար ավելի օգտակար կլինի մինչև պաշտոնական արդար լսումներ պահանջելը նախ անցնել որոշման վարչական վերանայման գործընթացով:

Արդար լսումներ պահանջելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել շրջանի վարչական պաշտոնյային Ձեր տարածքային գրասենյակում: Եթե արդար լսման որոշումը Ձեզ չի բավարարում, որոշումից հետո վեց ամսվա ընթացքում կարող եք Կալիֆորնիայի Գերագույն դատարան (California Superior Court) ներկայացնել պաշտոնատար անձին ուղղված կարգադրություն օրենքով նախատեսված պարտականությունները կատարելու մասին:

Գաղտնիություն

Դեպարտամենտը պարտավորվում է գաղտնի պահել Ձեր տրամադրած բոլոր տեղեկությունները:

Information Practices Act of 1977, California Civil Code, Sections 1798 et seq. Ձեզ որոշ իրավունքներ են երաշխավորում՝

- *Գաղտնիության իրավունք.*

Հավաքման ենթակա է Ձեր մասին միայն այն տեղեկատվությունը, որը տեղին և անհրաժեշտ է Դեպարտամենտի ծրագրի նպատակի իրականացման համար: Տեղեկատվությունը կօգտագործվի միայն ծառայությունների Ձեր ծրագրի մշակման համար, ներառյալ սպառողի դժգոհությունների կամ բողոքարկումների մասին որոշումների ընդունումը: Որոշ անձնական տեղեկություններ կարող են հաղորդվել Սոցիալական ապահովագրության վարչությանը՝ ծառայությունների պահանջներին Ձեր համապատասխանությունը ստուգելու համար:

- *Մուտքի իրավունք.*

Դուք կարող եք պահանջել Ձեր գործի բոլոր նյութերից օգտվելու հնարավորություն, որոնք պահպանվում են DOR-ում: DOR-ը պետք է Ձեզ կամ Ձեր ընտրած ներկայացուցչին անմիջապես թույլ տա ստուգել գործի նյութերում եղած ցանկացած փաստաթուղթ կամ առանձին տեղեկություն կամ տրամադրի դրանց պատճենները:

- *Ձեր գործի սպասարկման նյութերում ուղղում մտցնելու պահանջի իրավունք.*

Դուք կարող եք պահանջել Ձեր նյութերում առկա ցանկացած ապատեղեկատվության ուղղում՝ պահանջ ներկայացնելով Ձեր խորհրդատուին: Պահանջը պետք է լինի գրավոր և հնարավորինս կոնկրետ: Եթե վերականգնման հարցերով նրա վերահսկիչը համաձայն չէ Ձեր առաջարկած ուղղմանը, կարող եք պահանջել որոշման վարչական վերանայում կամ անաչառ լսում (տե՛ս էջ 27-28): Եթե

վերանայման կամ լսման արդյունքները չեն հաստատում Ձեր գործում առաջարկվող ուղղումը, կարող եք ընդունելի երկարության գրավոր հայտարարություն ներկայացնել, որում շարադրված կլինեն Ձեր տեսակետները վիճահարույց տեղեկության վերաբերյալ: Այդ հայտարարությունը կկցվի Ձեր ծառայությունների հաշվառման մեջ:

Բացահայտում

Ընդհանրապես, DOR-ը չի կարող սպառողի մասին տեղեկություններ հրապարակել՝ առանց Ձեզնից՝ սպառողից, թույլտվություն ստանալու: Սպառողը պետք է հրապարակման թույլտվության համապատասխան ձևաթերթիկ ստորագրի, նախքան DOR-ը կարող է տեղեկություններ հայտնել որևէ մեկին, ներառյալ տեղեկատվություն ընտանիքի անդամին, եթե չկա դատարանի կարգադրություն կամ որևէ օրենք, որը մեզանից կպահանջի բացահայտել տեղեկությունները: Հատուկ հանգամանքներում կան բացահայտումներ առանց համաձայնության, ինչպես նկարագրված է California Code of Regulations Section 7143-ում:

Բոլոր անձանց, ովքեր մուտք ունեն դեպի Ձեր նյութերը, արգելվում է այս տեղեկությունները վերաբացահայտել որևէ այլ անձի՝ առանց հատուկ, տեղեկացված, գրավոր համաձայնության:

Խտրականություն

DOR-ի քաղաքականությունն է՝ սպասարկել պահանջներին համապատասխանող բոլոր հաշմանդամ անձանց, առանց խտրականության՝ ըստ նրանց պաշտպանված կարգավիճակի, ներառյալ՝ ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամությունը, տարիքը, սեռը, մաշկի գույնը, էթնիկ խումբը, ռասան, ազգային ծագումը, նախնիները, կրոնը, առողջական վիճակը, սեռական կողմնորոշումը կամ ընտանեկան դրությունը:

Երբեմն հնարավոր է, որ DOR-ի կանոնակարգերն ու գործելակերպերը Ձեր խորհրդատուին թույլ չտան հաստատել պահանջվող ծառայությունը, և Ձեր պահանջը կփոխվի կամ կմերժվի: Այսպիսի որոշումը անհամաձայնություն է, այլ ոչ թե խտրականություն: Սակայն անհամաձայնությունը կամ որոշումը կարող է խտրականություն լինել, եթե պատճառը, որով Ձեր խորհրդատուն չի ընդունում կամ մերժում է Ձեր պահանջը, հիմնվում է Ձեր ռասայական պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ վերը նշված այլ պաշտպանված կարգավիճակի վրա:

Դուք ունեք Ձեր խորհրդատուի հետ ունեցած անհամաձայնությունները մեկ այլ անձի միջոցով կարգավորելու իրավունք: Դուք ունեք Ձեր անհամաձայնության կարգավորման համար Հաճախորդի աջակցման ծրագրի փաստաթղթի օգնությանը դիմելու իրավունք (տե՛ս էջ 26): Դուք անհամաձայնության կարգավորման համար ունեք նաև որոշման վարչական վերանայում, միջնորդություն և/կամ անաչառ լսումներ պահանջելու իրավունք (տե՛ս էջ 27-28): Այս գործընթացները կարող են շատ անհամաձայնություններ կարգավորել:

Եթե տեղեկություն ունեք, որ անհամաձայնության պատճառը եղել է Ձեր ռասայական պատկանելությունը, տարիքը, հաշմանդամությունը կամ այլ պաշտպանված կարգավիճակ, Դուք խնդիրը լուծելու համար խտրականության մասին բողոք ներկայացնելու իրավունք ունեք խտրական գործողության թվականից հաշված 180 օրվա ընթացքում:

Խտրականության մասին բողոք ներկայացնելու երեք եղանակ կա:

1. Դիմեք շրջանի վարչական պաշտոնյային և որոշման վարչական վերանայում պահանջել խտրականության հարցով: Բացատրեք, թե ինչու եք կարծում, որ անհամաձայնությունը կամ մերժումը հիմնված է եղել խտրականության վրա: **Քանի որ Ձեզ ծառայություն մատուցող հաստատությանն ամենից մոտ գտնվողը շրջանի վարչական պաշտոնյան է, նա գուցե ի վիճակի լինի Ձեր բողոքը լուծել ավելի անմիջականորեն ու արագ, քան՝ բողոքի այլ եղանակներ:** Ձեր շրջանի վարչական պաշտոնյան հասանելի է 34-35-րդ էջերում տրված կոնտակտային տվյալներով:
2. Դիմեք DOR-ի Քաղաքացիական իրավունքների վարչությանը (Office of Civil Rights) (OCR), եթե կարծում եք, որ կատարված գործողությունների և/կամ ընդունված որոշումների հիմքում ընկած է եղել անօրինական խտրականությունը (այսինքն՝ կապված է եղել պաշտպանված կարգավիճակի հետ՝ ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը, կրոնը, նախնիները, ազգային ծագումը, սեռական կողմնորոշումը, ընտանեկան դրությունը, առողջական վիճակը, ծագումնաբանությունը, ֆիզիկական կամ

հոգեկան հաշմանդամությունը, սեռը կամ տարիքը)՝ DOR-ի գործելակերպերի կամ կանոնակարգերի փոխարեն: OCR-ը Ձեզ կուղարկի խտրականության մասին բողոքի ներկայացման ձև ու կտրամադրի մանրամասն տեղեկատվություն, որը պետք է ներառեք Ձեր բողոքի մեջ: Ձեր բողոքը ստանալուց և ուսումնասիրելուց հետո OCR-ն անհրաժեշտության դեպքում հետաքննություն կանցկացնի և Ձեզ տեղյակ կպահի արդյունքի մասին: OCR-ին դիմեք հետևյալ հասցեով՝

Department of Rehabilitation
Office of Civil Rights
721 Capitol Mall
Sacramento, CA 95814
(916) 558-5850 Phone
(916) 558-5852 TTY

3. Դիմեք U.S. Department of Education, Office for Civil Rights (US DOE OCR): Բացատրեք Ձեր անհամաձայնությունը կամ մերժումը և տրամադրեք տեղեկություններ, որոնք կհիմնավորեն, թե ինչու եք կարծում, որ այն հիմնված է խտրականության վրա: US DOE OCR-ը կարող է անհրաժեշտության դեպքում հետաքննել Ձեր բողոքը և աշխատել DOR-ի հետ՝ այն լուծելու համար:

U.S. Department of Education
Office for Civil Rights
50 Beale Street, Ste. 7200
San Francisco, CA 94105
(415) 486-5555 Phone
(877) 521-2172 TTY

DOR-ի տարածքային գրասենյակները

Որտեղ գտնել տեղեկատվություն՝
www.dor.ca.gov

Հյուսիսային/Կենտրոնական
Կալիֆոռնիա

Greater East Bay

1485 Enea Court, Suite 1100
Concord, CA 94520-5228
(925) 602-3953 Phone
(925) 689-1798 Fax
(925) 676-5623 TTY

Northern Sierra

721 Capitol Mall, Suite 110
Sacramento, CA 95814-4702
(916) 558-5300 Phone
(916) 558-5303 Fax
(916) 558-5302 TTY

Redwood Empire

50 D Street, Suite 425
Santa Rosa, CA 95404-4764
(707) 576-2233 Phone
(707) 576-2239 Fax
(707) 576-8212 TTY

San Francisco

301 Howard Street, Suite 700
San Francisco, CA 94105-6604
(415) 904-7100 Phone
(415) 904-5996 Fax
(415) 904-7100 TTY

San Joaquin Valley

2550 Mariposa Mall, Rm. 2000
P.O. Box 24001
Fresno, CA 93779-9889
(559) 445-6011 Phone
(559) 445-6528 Fax
(559) 266-3373 TTY

San Jose

100 Paseo de San Antonio, Rm. 324
San Jose, CA 95113-1479
(408) 277-1355 Phone
(408) 277-1270 Fax
(408) 277-4129 TTY

Santa Barbara

509 E. Montecito Street, Suite 101
Santa Barbara, CA 93103-3216
(805) 560-8130 Phone
(805) 560-8162 Fax
(805) 560-8167 TTY

DOR-ի տարածքային գրասենյակները

Հարավային Կալիֆորնիա

Greater Los Angeles

3333 Wilshire Blvd, Suite 200
Los Angeles, CA 90010-4101
(213) 736-3904 Phone
(213) 736-3949 Fax
(213) 736-3960 TTY

San Diego

7575 Metropolitan Drive, Suite 107
San Diego, CA 92108-4402
(619) 767-2100 Phone
(619) 767-2156 Fax
(619) 767-2159 TTY

Los Angeles South Bay

4300 Long Beach Blvd, Suite 200
Long Beach, CA 90807-2008
(562) 422-8325 Phone
(562) 864-2776 Fax
(562) 422-9276 TTY

Van Nuys/Foothill

5900 Sepulveda Blvd, Suite 240
Van Nuys, CA 91411-2511
(818) 901-5024 Phone
(818) 901-4316 Fax
(818) 901-5086 TTY

Orange/San Gabriel

222 S. Harbor Blvd, Suite 300
Anaheim, CA 92805-3701
(714) 991-0800 Phone
(714) 991-0843 Fax
(714) 991-0800 TTY

Inland Empire

3130 Chicago Avenue, Suite 5
Riverside, CA 92507-3445
(951) 782-6650 Phone
(951) 782-6676 Fax
(951) 682-0143 TTY



DOR-ը հավասար հնարավորություններ ընձեռող գործատու- ծրագիր է

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՉ ԱՆԳԼԻԱԽՈՍՆԵՐԻՆ

Եթե Դուք դիմորդ, սպառող կամ DOR-ից տեղեկատվություն խնդրող անձ եք, ապա ունեք DOR-ի անձնակազմի հետ Ձեր հիմնական լեզվով հաղորդակցվելու իրավունք:

Դուք ունեք անհատի արժանապատվության, անձնական պատասխանատվության և ինքնորոշման նկատմամբ հարգալից վերաբերմունքի արժանանալու իրավունք: Դուք ունեք մասնագիտական վերականգնման գործընթացին լիովին մասնակցելու և համագործակցելու, ինչպես նաև DOR-ի անձնակազմին, նրա գործակալներին և գործընթացին համամասնակից անձանց քաղաքավարի ու սիրալիր վերաբերվելու պարտավորություն:

Խնդրում ենք մեզ հայտնել, եթե դժվարանում եք հասկանալ կամ խոսել անգլերեն, և մենք կօգնենք հաղորդակցվել Ձեր լեզվով:

Եթե ուզում եք հաղորդել կամ գանգատվել DOR-ի անձնակազմի հետ ունեցած լեզվական արգելքի մասին, պահանջեք խոսել վերականգնման հարցերով նրա վերահսկիչի հետ Ձեր տեղական գրասենյակում՝ լեզվական արգելքը վերացնելու համար:

Կարող եք ազատորեն նշումներ կատարել այս գրքում և պահել
օգտակար տեղեկությունները, որոնք Ձեզ կօգնեն հասնել Ձեր
նպատակին:

Նշումներ

*Մտանձնիր պարտավորություն,
դրսևորիր քեզ, հաղորդակցվիր
և գործը մինչև վերջ հասցրու*



**DEPARTMENT of
REHABILITATION**

Employment, Independence & Equality

Edmund G. Brown Jr.
Governor
State of California

Diana S. Dooley
Secretary
California Health and Human Services Agency

Anthony "Tony" P. Sauer, EMMDS
Director
Department of Rehabilitation

Այս հրատարակությունը կարող է մատչելի լինել Բրայլի
այբուբենով, խոշոր տպագրությամբ, համակարգչային սկավառակով
և մագնիսաձայնային ժապավենով: Պատվերները ներկայացնել՝

Department of Rehabilitation
Office of External Affairs
(916) 558-5874 Phone
(916) 558-5807 TTY
externalaffairs@dor.ca.gov
www.dor.ca.gov